**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

---

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**պարոն Ալեն Սիմոնյանին**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում ՀՀ ԱԺ պատգամավորներ Ծովինար Վարդանյանի և Արուսյակ Մանավազյանի կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագիծը (հիմնական զեկուցող՝ Ծովինար Վարդանյան)
2. Նախագծի ընդունման հիմնավորումը,
3. Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում ենք օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝**

**Ծովինար Վարդանյան**

**Արուսյակ Մանավազյան**

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:»:

**Հոդված 2.** 380.1-ին հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 1-ին մասում «գործարքների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը.

2) 1.1-ին մասից հետո լրացնել 1.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ եթե վճարումն իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով իսկ վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում պարտադիր է նաև ոչ էլեկտրոնաին հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը:».

3) 2-րդ մասում «իրականացման գործարքների» բառերից հետո լրացնել «, և 1.2-րդ մասում նշված՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 381-րդ հոդվածի 3-րդ մասում 19-րդ կետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել 20-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:»:

**Հոդված 4.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Formatted: Justified

**Հոդված 55. Հաշվարկային փաստաթղթեր և դրա կազմումը**

Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt

Formatted: Justified

Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

1. Հաշվարկային փաստաթուղթը սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ հարկ վճարողի կողմից դուրս գրվող փաստաթուղթ է, որով հիմնավորվում է՝

1) ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունք ձեռք բերելը: Սույն կետի կիրառության իմաստով՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ անկախ հաշվարկային փաստաթղթի դուրս գրման հանգամանքից.

2) ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը.

3) ապրանքի մատակարարումը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին.

4) ապրանքի տեղափոխությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքների և գործողությունների փաստաթղթավորման նպատակով կիրառվում են հետևյալ հաշվարկային փաստաթղթերը.

1) հարկային հաշիվ.

2) ճշգրտող հարկային հաշիվ.

3) հաշիվ վավերագիր.

4) ճշգրտող հաշիվ վավերագիր.

4.1) լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ.

5) հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն (այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն).

6) ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ.

7) ապրանքի տեղափոխության բեռնագիր (այսուհետ՝ բեռնագիր):

3. Սույն հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը կիրառվում են ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի

ստացման իրավունքի ձեռքբերումը, ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև հարկի գումարի պակասեցումները, ինչպես նաև ձեռք բերված ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար.

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt

Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

2) 5-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, իսկ, սահմանված պարտադիր տեղեկատվությունից (տվյալներից) բացի, կտրոնի վրա ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) պարունակելու դեպքում՝ նաև ապրանքի ձեռքբերման, աշխատանքի ընդունման և (կամ) ծառայության ստացման գծով ծախսի ճանաչումը, ինչպես նաև ապրանքի մատակարարումը կամ տեղափոխությունը փաստաթղթավորելու համար.

3) 6-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է հարկի գումարը հետ ստանալու իրավունքի ձեռքբերումը փաստաթղթավորելու համար.

4) 7-րդ կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է ապրանքի տեղափոխությունը փաստաթղթավորելու համար.

5) 4.1-ին կետով սահմանված հաշվարկային փաստաթուղթը կիրառվում է լիզինգի առարկայի հանձնում-ընդունումը փաստաթղթավորելու համար:

4. Հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառվում են՝

1) հաշվարկային փաստաթղթի սերիան ու համարը.

2) հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) ապրանքի մատակարարման ամսաթիվը, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) ամսաթիվը.

4) ավելացված արժեքի հարկի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունակով կամ տողով.

5) ակցիզային հարկի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում).

6) բնապահպանական հարկի գումարը՝ առանձին սյունակով կամ տողով (միայն Օրենսգրքի 8-րդ բաժնով սահմանված՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող-իրացնողների և արտադրող-իրացնողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման դեպքում).

7) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի անվանացանկն ու քանակը և (կամ) աշխատանքի, ծառայության տեսակն ու ծավալը.

7.1) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի, բացառությամբ անշարժ գույքի և սույն մասի 11-րդ կետով սահմանված ապրանքների, ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

7.2) հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.

8) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը), ընդհանուր արժեքը և (կամ) աշխատանքի, ծառայության սակագինը, առևտրային զեղչը՝ առկայության դեպքում (այդ թվում՝ հրապարակային առևտրային զեղչը) ու ընդհանուր արժեքը.

9) ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը.

10) ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, իսկ ապրանքների մատակարարման դեպքում՝ ապրանքների նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, ապրանքների նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքը գնորդին է հանձնվում առաքման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը.

11) ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 10 նիշի մակարդակով, ինչպես նաև հետագծելիություն իրականացնելու նպատակով ապրանքի քանակական չափման միավորը, 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետագծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի համաձայն, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հետագծելիության ենթակա ապրանքների մասով:

12) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում ՀԴՄ կտրոնի վրա տպագրվում է յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ:

Formatted: Justified

Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

5. Հաշիվ վավերագրում կամ ճշգրտող հաշիվ վավերագրում պարտադիր ներառվում են սույն հոդվածի 4-րդ մասում նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով սահմանված տվյալների:

5.1. Լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտում պարտադիր ներառվում են՝

1) հաշվարկային փաստաթղթի սերիան ու համարը.

2) հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը.

3) լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթիվը.

4) ավելացված արժեքի հարկի դրույքաչափն ու գումարը՝ առանձին սյունով կամ տողով (ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման դեպքում).

5) լիզինգի առարկայի անվանացանկը, քանակը, միավորի գինը ու ընդհանուր արժեքը.

6) լիզինգատուի՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի առաքման կամ հանձնման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը.

7) լիզինգառուի՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու և գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեները, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, լիզինգի առարկայի նշանակման վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքերի, երբ լիզինգի առարկան հանձնվում է առաքման կամ հանձնման վայրում), պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը:

6. ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվում պարտադիր ներառվող տվյալների շրջանակը սահմանում է Կառավարությունը:

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

7. Բեռնագրում պարտադիր ներառվում են սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 7.1-ին կետերում նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերով սահմանված տվյալների փոխարեն ներառվում են համապատասխանաբար՝

1) ապրանքի տեղափոխության ամսաթիվը.

2) տեղափոխվող ապրանքի անվանացանկն ու քանակը.

3) ապրանք տեղափոխող՝

ա. հարկ վճարողի հաշվառման համարը, իսկ ավելացված արժեքի հարկ վճարողների դեպքում՝ նաև ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, առաքման վայրի հասցեն կամ առաքման կետի տվյալները, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը,

գ. անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը, գործունեությունը փաստացի իրականացնելու վայրի հասցեն, «անհատ ձեռնարկատեր» կամ «ԱՁ» նշումը, տեղափոխվող ապրանքի նշանակման վայրի հասցեն, պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը:

8. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հաշվարկային փաստաթղթերում, բացի սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված տվյալներից, այդ հաշվարկային փաստաթղթերը դուրս գրող և (կամ) ստացող հարկ վճարողների հայեցողությամբ կարող են ներառվել նաև այլ տվյալներ:

9. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ մշտական հաստատության կողմից դուրս գրվող հարկային հաշվում, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ նաև ճշգրտող հարկային հաշվում, որպես ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող հարկ վճարողի հաշվառման համար և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար նշվում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպության, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ մշտական

հաստատության հարկ վճարողի հաշվառման համարը և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը:

10. Եթե ապրանքը ձեռք է բերվում, աշխատանքը ընդունվում է, և (կամ) ծառայությունը ստացվում է Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից, ապա այդ գործարքների մասով դուրս գրվող՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված հաշվարկային փաստաթղթերում սույն հոդվածի 4-7-րդ մասերում նշված որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկային փաստաթղթերը համարվում են սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող, եթե՝

1) առկա է գործարքն իրականացնող կողմերի միջև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագիր, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները և հաշվարկային փաստաթղթում հղում է կատարված այդ պայմանագրին, կամ

2) գործարքն իրականացվում է գործարքն իրականացնող կողմի տված գրավոր լիազորագրի հիման վրա, որտեղ նշված են հաշվարկային փաստաթղթում բացակայող բոլոր տվյալները:

11. ***(մասն ուժը կորցրել է 01.06.20 ՀՕ-280-Ն)***

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

12. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով չսահմանված գործարքների ու գործառնությունների (այդ թվում՝ աշխատողներին աշխատավարձ հաշվարկելու, պետական և տեղական հարկեր, տուրքեր, վճարներ կամ Օրենսգրքով չսահմանված այլ վճարներ վճարելու), ինչպես նաև վճարահաշվարկային համակարգի կամ վարկային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով:

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

12.1. Անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված, Կառավարությունը սահմանում է ծախսերի փաստաթղթավորման այլ կարգ:

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

13. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող գյուղատնտեսական արտադրանքի, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ձեռք բերվող կամ վարձակալությամբ օգտագործվող գույքի, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ձեռք բերվող ապրանքների, ընդունվող աշխատանքների և (կամ) ստացվող ծառայությունների, ինչպես նաև կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրվող գույքի գծով առաջացող ծախսերը կարող են փաստաթղթավորվել հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերով, եթե դրանցում առկա են սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 3-րդ և 7-10-րդ կետերում (բացառությամբ անհատ ձեռնարկատեր և նոտար

չհանդիսացող ֆիզիկական անձանց համար 9-րդ կետի «ա» ենթակետի և 10-րդ կետի «ա» ենթակետի) նշված՝ հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառման ենթակա տվյալները: Կառավարությունը կարող է սահմանել սույն մասով սահմանված ծախսերի փաստաթղթավորման այլ կարգ:

14. Սույն հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով: Հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի դուրսգրման դեպքերը, կարգը և ժամկետները սահմանում է Կառավարությունը:

15. Կրիպտոակտիվների օտարման գործարքների մասով եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, ինչպես նաև կրիպտոակտիվների ձեռքբերման ծախսերը կարող են փաստաթղթավորվել նշված գործարքները հիմնավորող՝ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով:

**Հոդված 380.1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը**

1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա:

1.1. Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է:

1.2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից՝ եթե վճարումն իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով իսկ վճարային քարտերի միջոցով վճարման դեպքում պարտադիր է նաև ոչ էլեկտրոնաին հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը:

2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան ծրագրային ապահովում է, որը հնարավորություն է ընձեռում սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների, իսկ 1.1-ին մասում նշված՝ հարկ վճարողների կողմից ուղևորափոխադրումների իրականացման գործարքների, և 1.2-րդ մասում նշված՝ բժշկական

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Justified
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt, English (United States)
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: 12 pt

օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համար գեներացնելու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն:

Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

3. Էլեկտրոնային կտրոնը ձևավորվում է հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգին սույն հոդվածի 4-րդ մասում նշված ձևաչափով սահմանվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով փոխանցելու և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգից էլեկտրոնային եղանակով ֆիսկալային համար ստանալու ու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի վրա պարտադիր տպագրման ենթակա տեղեկատվությունն արտացոլելու միջոցով:

4. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները, էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կիրառության կանոնները սահմանում է Կառավարությունը: Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հարկային մարմնի հաստատած հատուկ ձևաչափով (վեբ ծառայության նկարագիր):

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

5. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները չպահպանելն առաջացնում է Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:

***(380.1-ին հոդվածը լրաց. 01.06.20 ՀՕ-280-Ն, լրաց., խմբ. 08.12.23 ՀՕ-395-Ն)***

***(01.06.20 ՀՕ-280-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**Հոդված 381. Հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները**

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt
Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Justified
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

1. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներն իրականացնել Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում գրանցված և Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով:

2. Հսկիչ դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի, շրջիկ առևտրի կետի, առևտրի իրականացման վայրի վաճառատեղի, աշխատանքի կատարման վայրի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը: Շրջիկ առևտրի կետերի միջոցով, ինչպես նաև Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերում մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված՝ ապրանքի անվանման և ԱՏԳ ԱԱ ծածկագրի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից:

3. Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

Formatted: Font: (Default) Calibri, 12 pt
Formatted: Font: GHEA Grapalat, 12 pt

Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները).

1) կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ.

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը).

3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը.

4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

5) հսկիչ դրամարկղային մեքենայի գրանցման համարը (ԳՀ).

6) կտրոնի տպագրման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գեներացվող վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.

7) սպասարկող բաժնի համարը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

8) ապրանքի անվանումը և ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, իսկ հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում՝ նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները), բացառությամբ «կանխավճար»

գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

9) գնվող ապրանքի քանակը, դրա չափման միավորը, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների՝ Կառավարության սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան.

10) կիրառված զեղչի չափը (կիրառվելու դեպքում).

11) վճարման ենթակա գումարները՝ ըստ բաժինների.

12) ընդհանուր գումարը, ներառյալ՝ ԱԱՀ-ն, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

13) ԱԱՀ-ի գումարը, եթե գործարքն իրականացնողը ԱԱՀ վճարող է և գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման, բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների.

14) պատասխանատու անձի (գանձապահի) համարը.

15) ֆիսկալավորման ռեժիմի նշանը (Ֆ).

16) «կանխավճար» գրառումը՝ կանխավճարների ստացման, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարզ չէ, թե վերցված գումարների դիմաց հետագայում ինչ ապրանքներ կիրացվեն, ինչ աշխատանքներ կկատարվեն կամ ինչ ծառայություններ կմատուցվեն.

17) հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ֆիսկալ համարը՝ 8 նիշ (բացառությամբ վերադարձի կտրոնների).

18) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վաճառքի դեպքում՝ նույնականացման միջոցների քանակը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների).

19) նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում՝ նույնականացման միջոցների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների)։.

20) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում՝ յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ համապատասխան բժշկական ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ։

3.1. Բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասում նշված դեպքերի, հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում պարտավոր են հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով ապահովել այդ նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու

**Formatted:** Font: 12 pt

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt, English (United States)

**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ այդ նույնականացման միջոցներն սկանավորելու և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն տպագրելու միջոցով:

3.2. Կառավարության սահմանած դեպքերում և կարգով նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

4. Այն դեպքում, երբ նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնողները բնակչությանը ծառայություններ են մատուցում գործունեության (հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության) վայրից դուրս, պարտավոր են գործունեության վայր վերադառնալով՝ ոչ ուշ, քան երեք ժամվա ընթացքում, հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրել մատուցված ծառայության դիմաց ստացված գումարը, իսկ մեկ օրվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրել կամ փոստով առաքել ծառայություն ստացողին:

5. Արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները դրամական հաշվարկներն իրականացնում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայով կամ դրան փոխարինող և նույն պահանջները բավարարող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներով:

6. Կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների համար սույն գլխին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չլինելու դեպքում տեղադրված և կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով արձանագրված շրջանառությունը հիմք չէ հարկերի հաշվարկման համար, իսկ այդ հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցումից հանվում է (գրանցված լինելու դեպքում) Կառավարության սահմանած կարգով:

7. Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը:

8. Արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողների կողմից կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումներին և ցանցային կապի միջոցներին ներկայացվող պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենային փոխարինող՝ համապատասխան ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների կիրառության կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ հարկային մարմնի հետ համատեղ:

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt
**Formatted:** Font: (Default) Calibri, 12 pt
**Formatted:** Font: GHEA Grapalat, 12 pt

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### Հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ընդունման

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Օրենքի նախագծի ընդունումն ուղղված է բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի և քաղաքացիների փոխհարաբերությունների կարգավորմանը, մասնավորապես՝ վճարահաշվարկային տերմինալների միջոցով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների համար կատարված վճարումների դիմաց քաղաքացիներին տրվող հսկիչ դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոնների տրամադրման դյուրինացմանը:

Միաժամանակ նախագծի ընդունումը կնպաստի բժշկական հաստատությունների կողմից պետպատվերի և սոցիալական փաթեթի շրջանակներից դուրս մատուցված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության բարձրացմանը, առողջապահական տվյալների ամբողջականության ապահովմանը:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Համաձայն Հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի՝ կազմակերպությունների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է բնակչությանը ծառայություններ մատուցելիս: Հիմք ընդունելով հարկային օրենսգրքի այս հոդվածը՝ բժշկական կազմակերպությունները ծառայություններ տրամադրելիս պարտադիր պետք է տրամադրեն ՀԴՄ կտրոն: Գործնականում, երբ վճարումը իրականացվում է վճարային քարտերի միջոցով, ՀԴՄ-ՊՈՍ համակցված տերմինալների միջոցով քաղաքացուն տեղում տրամադրվում է հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը, իսկ վճարային տերմինալների միջոցով վճարում իրականացնելիս սարքավորումը տրամադրում է միայն ԿԲ խորհրդի 14.10.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ սահմանված «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը: Այդ դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն ստանալու համար քաղաքացին պետք է մոտենա բժշկական հաստատության հաշվապահություն: Նման գործընթացը բարդություն է ստեղծում

քաղաքացիների համար, բժշկական հաստատություններում առաջանում են կազմակերպչական խնդիրներ և հետագայում դրանք հաշվապահորեն ձևակերպելու դժվարություններ:

Միաժամանակ, ներկայումս բժշկական հաստատությունների կողմից պետպատվերի և սոցիալական փաթեթի շրջանակներից դուրս մատուցված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ տվյալները շատ հաճախ չեն մուտքագրվում էլեկտրոնային առողջապահական համակարգ, չնայած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասին, որի համաձայն՝ լիցենզավորված անձը էլեկտրոնային առողջապահության համակարգում պետք է ապահովի տվյալների թարմացումը, պացիենտների այցելությունների, մատուցվող ծառայությունների, բժշկական միջամտությունների, ախտորոշումների, նշանակումների, անձի առողջության և նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական տվյալների մուտքագրումը դրանց փաստացի կատարման պահին: Ավելին՝ ՀՀ կառավարության 29 հունիսի 2002 թվականի N867 որոշմամբ հաստատված են դեղատնային գործունեության իրականացման, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգերը, որոնք ևս սահմանում են էլեկտրոնային առողջապահական համակարգին միանալու և սահմանված տվյալների մուտքագրման պահանջ:

Մատուցված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մասին տեղեկության բացակայությունը հնարավոր է լինում պարզել միայն այն դեպքում, երբ տվյալ լիցենզավորված անձը ներառված է լինում առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից կազմված տարեկան ստուգումների պլանում:

### 3. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենքի նախագծով նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 380.1 հոդվածում կատարել փոփոխություն լրացումներ, որոնց համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերի համարա պարտադիր կլինի կիրառել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա, իսկ եթե վճարումը իրականացվել է վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող  վճարային գործիքների միջոցով (վճարային տերմինալ) կամ վճարային քարտերի, ապա այս դեպքերում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա ունենալը կդառնա պարտադիր, և ծառայությունների մատուցման դիմաց կատարված վճարման դիմաց կգեներացվի էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն, որը քաղաքացին կարող է ստանալ էլեկտրոնային առողջապահական համակարգի հավելվածի միջոցով:

Միաժամանակ, նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ և 381-րդ հոդվածներում կատարել լրացումներ, որոնց համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման դեպքում, համապատասխանաբար, հարկային հաշվի և ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրվի նաև յուրաքանչյուր մատուցված ծառայության համար էլեկտրոնային առողջապահության համակարգի կողմից գեներացված՝ տվյալ ծառայության անհատականացված նույնականացման ծածկագիրը և ծառայությունը ստացած քաղաքացու ՀԾՀ, ինչը կապահովի մատուցված ծառայությունների մասին տվյալների պարտադիր մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ:

Օրենքի ընդունման դեպքում անհրաժեշտություն է առաջանալու կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման 7-րդ հավելվածում կատարել համապատասխան փոփոխություններ:

**4. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունները**

Օրենքի նախագծի ընդունումը չի պահանջում լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

**5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:**

Որոշման նախագիծը կապված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.5 Առողջապահություն» բաժնի 8-րդ կետի պահանջների ապահովման հետ, մասնավորապես՝ Կառավարության հիմնական նպատակներից շարունակում է մնալ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրումը, որի շնորհիվ քաղաքացիներին էլեկտրոնային հարթակում հասանելի կլինեն իրենց բժշկական տվյալները: Ձևավորված առողջության պատմության, այդ թվում՝ բժշկական հետազոտությունների էլեկտրոնային տվյալները հնարավոր կլինի օգտագործել տարբեր բժշկական հաստատություններ հաճախելիս: Այդպիսով կբարձրանա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակը և արդյունավետությունը, որը կնպաստի կրկնակի հետազոտությունների և բուժումների նվազմանը և հետևաբար դրանց համար կատարվող ծախսերի կրճատմանը թե՛ պետության, թե՛ քաղաքացիների համար: Կապահովվեն նաև առողջական տվյալների ամբողջական հավաքումը և դրանց հիման վրա վերլուծությունների իրականացումը, որն էլ իր հերթին կհանգեցնեն ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և թափանցիկ բաշխմանը: